

Ձ. 1898ին. հաշուակալ և գանձասպետ Ս. Յակոբի վանքին (1889—1906). ֆարսուղար և գաւազանակիր Մատթէոս Իգմիրլեան կթղւին ի Ս. Էջմիածին (1909—1910). մահկնադարձասպետ Ս. Յակոբ վանքին 1906 ին. տեսուչ դպրոցաց սկսեալ 1911էն մինչեւ ցարգ. տեսուչ տպարանի 1913էն սկսեալ եւ կը վարէ ցարգ. անդամ վարչ. ժողովի (1907—8). անդամ Տն. ժողովի (1907—8 եւ 1921). կ'ընտրուի Լսպ. 1922 ին, եւ կը վարէ ցարգ. 1915 ին Ս. Յակոբի տպարանէն հրատարակած է Գրիգոր վրդ. Դարանաղցիին ժառանգակարութիւնը ընդարձակ յառաջաբանով մը. Հայկական տպագրութեան 400 ամեակին առթիւ, վանքին 1914ի օրացոյցին կցած է Ակնարկ մը Երուսաղէմի Ս. Յակոբեանց սպարակին վրայ խորագրով պատմական յօդուած մը. կցելով նոյն տպարանին սկիզբէն հրատարակած գիրքերու ցուցակը: Հանգուցեալ Տիգրան Սաւալանեանի գրաբար լեզուով յօրինած Երուսաղէմի ընդարձակ պատմութիւնը Մեսրոպ Արքայան մաքուր աշխարհաբարի վերածելով յանձնած է տպագրութեան: Ունի նաև գրական եւ բանասիրական յօդուածներ Տարեցոյցներու եւ զանազան լրագիրներու մէջ. տպագրութեան համար պատրաստած է Քէօմիրճեան Երեմիա Ձէյէպիի Օրագրութիւնը: Լսպ. Տ. Մեսրոպ Արքայան 1923 Յունիս 22 թուականին Երիքովի մէջ գնած իր սեպհական պարտէզը, որ պտղատու ծառեր ալ կը պարունակէ եւ այժմ գրեթէ քսան արտավար տարածութիւն ունի, Ս. Յակոբի վանքին կը նուիրէ: Ապա վանքի կողմէ մասեր գնուած ու կցուած են նոյն պարտէզին: Տնօրէն ժողովը ընդունելով այս նուիրատուութիւնը, Միաբանութեան անունով իր շնորհակալութիւնը յայտնեց ու արձանագրեց իր պայմանները. (Արձագր. Տն. ժողովի. նիստ ձՂԴ. 1923): 1926 էն սկսեալ կը պատրաստէ Ս. Յակոբի վանքին Օրացոյցը:

ՄԵՍՐՈՊ ՊԵ. — Կը գահակալէր 1008 ին. (ժպե. հատ. Ա. էջ 123):

ՄԵՍՐՈՊ ՊԵ. — 805 ՀԻՃԲ (=1402) թուին Ս. Յակոբի վանքին գահակալ կը յիշուի Եգիպտոսի Մէլիք Աշրաֆ Սէյֆի սուլթանէն առնուած հրովարտակի մը մէջ. նոյն թուականին Արաբները Հայոց ձառնեալ ըստած գերեզմանատեղին կը գրաւեն ու նեղութիւն կը պատճառեն. Մեսրոպ անձամբ Եգիպտոս եր-